Նախագիծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ------ 2023թ. **N -Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑՕԹՅԱ ՎԱՅՐԵՐԻ (ՓՈՂՈՑ, ՄԱՅԹ, ՀՐԱՊԱՐԱԿ, ԱՅԳԻ, ՊՈՒՐԱԿ ԵՎ ԱՅԼՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 24.2-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Սահմանել մշակութային գործունեության իրականացման նպատակով Երևան քաղաքի հանրային բացօթյա վայրերի (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ և այլն) օգտագործման պայմանները, պահանջները և սահմանափակումները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2023 թվականի նոյեմբերի 1-ից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված

Երևան քաղաքի ավագանու

_____ « » N –Ն որոշման

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑՕԹՅԱ ՎԱՅՐԵՐԻ (ՓՈՂՈՑ, ՄԱՅԹ, ՀՐԱՊԱՐԱԿ, ԱՅԳԻ, ՊՈՒՐԱԿ և ԱՅԼՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում են մշակութային գործունեության իրականացման նպատակով Երևան քաղաքի հանրային բացօթյա վայրերի՝ փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ և այլն, (այսուհետ՝ Երևան քաղաքի հանրային բացօթյա վայր) օգտագործման պայմանների, պահանջների և սահմանափակումների հետ կապված հարաբերությունները:

2. Սույն կարգի իմաստով մշակութային գործունեության իրականացում է համարվում Երևան քաղաքի հանրային բացօթյա վայրերում անձի կամ անձանց խմբի կողմից կինոարվեստի և տեսալսողական այլ արվեստների, կերպարվեստի, բեմական, կրկեսային, տարածական և երաժշտական արվեստի ու արվեստի այլ տեսակների և ժանրերի, ինչպես նաև ինքնագործ (սիրողական) գեղարվեստական ստեղծագործական գործունեության ոլորտներում մշակութային արժեքների և առարկաների (օբյեկտների) պահպանմանը, ստեղծմանը, տարածմանը, մեկնաբանմանը, մշակութային բարիքների մատուցմանը և իրացմանը (երաժշտական կատարում, պար, աճպարարություն, նկարչություն, արհեստագործություն, ասմունք, դերասանություն և այլն) ուղղված գործունեությունը:

3. Մշակութային գործունեություն կարող է իրականացնել յուրաքանչյուր ոք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևան քաղաքի հանրային բացօթյա վայրերի օգտագործման պայմանների, պահանջների և սահմանափակումների պահպանմամբ:

2. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑՕԹՅԱ ՎԱՅՐԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

4. Երևան քաղաքի հանրային բացօթյա վայրերում մշակութային գործունեության իրականացումը չպետք է խոչընդոտի հետիոտնի, տրանսպորտային միջոցների երթևեկությանը, ինչպես նաև հարակից օբյեկտների գործունեությանը:

5. Երևան քաղաքի հանրային բացօթյա վայրերում մշակութային գործունեության իրականացման ընթացքում արգելվում է այնպիսի նյութերի և առարկաների օգտագործումը (կիրառումը), որոնք կարող են անմիջական վտանգ առաջացնել մարդկանց կյանքի, առողջության, սեփականության պաշտպանության, շրջակա միջավայրի պահպանության համար:

6. Մշակութային գործունեության իրականացման ընթացքում արգելվում է պայթյունահրդեհավտանգ, հրդեհավտանգ, դյուրավառ նյութերի և առարկաների օգտագործումը (կիրառումը) պայթյունահրդեհավտանգ օբյեկտների տարածքներում, գազատար և նավթատար խողովակաշարերին, ինչպես նաև բարձր լարման էլեկտրահաղորդալարերին անմիջապես հարակից տարածքներում, երկաթգծի հանգույցներում, այնպիսի վայրերում, որտեղ առկա են էլեկտրահաղորդման լարեր և այլ պայթյունավտանգ, հրդեհավտանգ արգելքներ:

7. Արգելվում է մշակութային գործունեության իրականացումը սահմանադրական կարգը բռնի տապալելու, ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն, պատերազմ կամ քրեական ենթամշակույթ,

քրեական ենթամշակույթ կրող խմբավորման սահմանած և ճանաչած վարքագծի կանոններ քարոզելու նպատակով:

8. Արգելվում է մշակութային գործունեության իրականացումը, որն ուղեկցվում է հայհոյանքներով կամ անպարկեշտ արտահայտություններով կամ մարդկանց անդորրը խախտելով կամ օբյեկտի, հիմնարկի կամ կազմակերպության բնականոն աշխատանքը խոչընդոտելով:

9. Հայաստանի Հանրապետությունում պաշտոնապես հայտարարված սգո և հիշատակի ոչ աշխատանքային օրերին արգելվում է մշակութային գործունեության իրականացումը, որը դրսևորվում է տոնական, զվարճալի երաժշտական կատարումներով, պարերով և այլ կատարողական գործունեությամբ:

10. Մշակութային գործունեության իրականացման ընթացքում ուղեկցվող ձայնի ուժգնությունը չպետք է գերազանցի 60 դեցիբելը:

11. Բնակելի, հասարակական նշանակության շենքերին, շինություններին հարակից բացօթյա հանրային վայրերում՝ մշակութային գործունեություն կարող է իրականացվել բնակելի, հասարակական նշանակության շենքերից, շինություններից առնվազն 10 մ հեռավորության վրա՝ ժամը 10:00-ից 21:00-ն ընկած ժամանակահատվածում և մինչև 23.00-ն՝ բնակելի, հասարակական նշանակության շենքերից, շինություններից առնվազն 100 մ հեռավորության վրա:

12. Մշակութային գործունեության իրականացման ավարտից հետո մշակութային գործունեություն իրականացնող անձը պետք է ապահովի տարածքի պահպանումը՝ այն բերելով իր նախկին տեսքին:

13. Սույն կարգի պահանջների գործողությունը չի տարածվում պետության կամ համայնքի կողմից կամ նրանց պատվերով կազմակերպվող միջոցառումների վրա, ինչպես նաև ծիսակարգային արարողությունների (հարսանեկան, հուղարկավորության կազմակերպում և այլն) ընթացքում իրականացվող մշակութային գործունեության վրա:

14. Սույն կարգով սահմանված պահանջների խախտումն առաջացնում է վարչական պատասխանատվություն:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑՕԹՅԱ ՎԱՅՐԵՐԻ (ՓՈՂՈՑ, ՄԱՅԹ, ՀՐԱՊԱՐԱԿ, ԱՅԳԻ, ՊՈՒՐԱԿ ԵՎ ԱՅԼՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

2023 թվականի մարտի 22-ին ընդունված «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-113-Ն օրենքով, որն ուժի մեջ է մտել 2023 թվականի ապրիլի 14-ին, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը լրացվել է նոր 24.2-րդ կետով՝ համայնքի ավագանուն վերապահելով իրավասություն սահմանելու մշակութային գործունեության իրականացման նպատակով Երևան քաղաքի հանրային բացօթյա վայրերի (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ և այլն) օգտագործման պայմանները, պահանջները և սահմանափակումները:

Նախագծի ընդունումը պայմանավորված է Երևան քաղաքի և քաղաքային բնակավայրերի բացօթյա վայրերում (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ և այլն) ստեղծագործական, մշակութային (երաժշտական, գրական, պարային և այլն) գործունեություն իրականացնողների գործունեությունը (այսուհետ՝ նաև փողոցային ստեղծագործական ելույթ) կանոնակարգելու անհրաժեշտությամբ:

ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատություն, իսկ «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» օրենքի 9-րդ և 10-րդ հոդվածների համաձայն՝ յուրաքանչյուր մարդ իրավունք ունի իրականացնելու ստեղծագործական գործունեություն: Ստեղծագործական գործունեության իրավունքը կարող է իրականանալ և' մասնագիտորեն, և' ոչ մասնագիտորեն (սիրողաբար): Հայաստանի Հանրապետության տարածքում հասարակության մշակութային կյանքին մասնակցելը և մշակութային գործունեություն իրականացնելը յուրաքանչյուր մարդու անկապտելի իրավունքն է՝ անկախ նրա ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, համոզմունքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից:

Հանրային վայրերում (բացօթյա վայրերում) իրականացվող ստեղծագործական, մշակութային գործունեությունը, սակայն, կարող է լուրջ անհարմարություններ պատճառել այլ քաղաքացիներին, տնտեսվարող սուբյեկտներին: Նշված խնդիրը չի կանոնակարգվում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքներով, այլ իրավական ակտերով:

Փողոցային ստեղծագործական ելույթների բնագավառի կանոնակարգման բացակայությունը հանգեցրել է մի իրավիճակի, երբ ցանկացած փողոցային ստեղծագործական ելույթ իրականացնող անձ կամ խումբ առանց որևէ սահմանափակումների կարող է իրականացնել գործունեություն, որը կարող է անհարմարություն պատճառել բնակիչներին և զբոսաշրջիկներին, խոչընդոտել քաղաքացու հանգիստն ու ազատ ժամանցը կազմակերպելու իրավունքի իրացմանը, ինչպես նաև խաթարել բազմաբնակարան շենքերի բնակիչների անդորրը:

Սույն նախագծով նախատեսված դրույթների ընդունմամբ կսահմանվի բացօթյա վայրերում (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ և այլն) մշակութային գործունեության իրականացման կարգը, արդյունքում հստակեցվեն Երևան քաղաքում փողոցային ստեղծագործական ելույթների հետ կապված իրավահարաբերությունները:

Նախագծով նախատեսվել է, որ Նախագծով սահմանված պահանջների չպահպանումը առաջացնելու է վարչական պատասխանատվություն՝ հիմք ընդունելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 180.2-րդ հոդվածով նախատեսված կարգավորումները, համաձայն որոնց՝ մշակութային գործունեության իրականացման նպատակով հանրային բացօթյա վայրերի (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ և այլն) օգտագործման պայմանները, պահանջները և սահմանափակումները խախտելը՝ առաջացնում է նախազգուշացում կամ տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով: Նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը կրկին կատարելը վարչական տույժի միջոց կիրառելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից մինչև ութհարյուրապատիկի չափով՝ խախտողի անձնական սեփականություն հանդիսացող այն առարկաների բռնագրավմամբ, որոնք հիշյալ խախտումները կատարելու գործիք են համարվել, կամ առանց դրանց բռնագրավման:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N1

«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑՕԹՅԱ ՎԱՅՐԵՐԻ (ՓՈՂՈՑ, ՄԱՅԹ, ՀՐԱՊԱՐԱԿ, ԱՅԳԻ, ՊՈՒՐԱԿ ԵՎ ԱՅԼՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Մշակութային գործունեության իրականացման նպատակով Երևան քաղաքի հանրային բացօթյա վայրերի (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ և այլն) օգտագործման պայմանները, պահանջները և սահմանափակումները սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք N 2

«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԲԱՑՕԹՅԱ ՎԱՅՐԵՐԻ (ՓՈՂՈՑ, ՄԱՅԹ, ՀՐԱՊԱՐԱԿ, ԱՅԳԻ, ՊՈՒՐԱԿ ԵՎ ԱՅԼՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ, ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Մշակութային գործունեության իրականացման նպատակով Երևան քաղաքի հանրային բացօթյա վայրերի (փողոց, մայթ, հրապարակ, այգի, պուրակ և այլն) օգտագործման պայմանները, պահանջները և սահմանափակումները սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունմամբ Երևան քաղաքի 2023 թվականի բյուջեում փոփոխություններ չեն առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ